ԼԻՊԱՐԻՏ ՍԱՐԳՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ ԳԱԼՅԱՆ

# ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ



ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
հրատարակչություն

ՀՏԴ 784 : 891.981-1 Սարգսյան
ԳՄԴ 85.314 + 84Հ-5
Ս 259

**Սարգսյան Լիպարիտ, Գալյան Կարինե**
Ս 259 Երաժշտական գործիքներ/ Լ. Սարգսյան, Կ. Գալյան.- Եր.: Էդիթ Պրինտ, 2013.- 48 էջ:

«Երաժշտական գործիքներ» ինքնատիպ ժողովածուն ծնվել է բանաստեղծ Լիպարիտ Սարգսյանի և կոմպոզիտոր Կարինե Գալյանի համատեղ ջանքերով:

Երգերի տեքստերում փորձ է արվել բանաստեղծական խոսքով որոշ տեղեկություններ հաղորդել մի շարք երաժշտական գործիքների ստեղծման և նրանցով հնչեցվող մեղեդիների յուրահատկությունների մասին:

Գրքին կցված սկավառակում ձայնագրված են ժողովածուի երգերը` Երևանի թիվ 135 դպրոցի շնորհալի սաների կատարմամբ:

ՀՏԴ 784 : 891.981-1 Սարգսյան
ԳՄԴ 85.314 + 84Հ-5

ISBN 978-9939-52-634-8

© Էդիթ Պրինտ

Մարդն իր աշխարհ գալու օրից
Երգ է սիրել:
Երգելով է պատը շարել,
Հողը վարել...
Երբ ոչխար է պահել հանդում,
Երբ նստել է ծառի հովին,
Մեղեդի է ծնվել սրտում,
Օգնության է հասել շվին:
Հետո՛ զուռնան, թմ՛ըը հետո,
Դափ-դհոլն են եկել հերթով,
Որ երբ վար ու ցանքն ավարտեն,
Երբ բերք-բարիքը հավաքեն,
Տուն ու մառան լցվի բարով,
Բերքի տոնը նշեն սիրով՝
Երգ ու պարով...
Եվ հարսանիք լինի հետո,
Ստեղծվեն նոր օջախ ու տուն.
Իսկ առանց երգ ու նվագի
Ի՜նչ հարսանիք, ուրախությո՜ւն,
Հանդես ու տոն...

# ԴԱՇՆԱՄՈՒՐ

Ստեղներս սպիտակ ու սև,
Հնչյուններս՝ քաղցրալուր,
Դուք բոլորդ ինձ գիտեք.
Իմ անունն է դաշնամուր:
Եվ այս մեկն էլ հիշեցեք,
Որպես հարգանք իմ անձին,
Բեմերում միշտ փոքր ու մեծ,
Տեղ ունեմ ես առանձին:




Աշխույժ
F C7
Ստեղ - նե - րըս սպի - տակ ու սև,
C7 F
իրեն - չյուն - նե - րըս՝ քաղց - րա - լուր,
B♭ A7 Dm
դուք բո - լո - րըդ ինձ գի - տեք,
B♭ C F
իմ ա - նունն է դաշ - նա - մուր:

# ՔԱՄԱՆՉԱ

Առվի կարկաչ, շշուկ հովի,
Ալեբախում կապույտ ծովի,
Հյուսված եմ ես հավերժորեն
Անվանը մեծ Սայաթ-Նովի:




Հանգիստ
Am
Առ - վի կար - կաչ, շը - շուկ ղո -
Am A7 Dm G7 C A7
- վի, ա - լե - քա - խում կա-պույտ ծո - վի, հյուս-ված եմ
Dm E7 F Dm
ես հա - վեր - ժո - րեն ան - վա - նը
Am B7 E7 1. Am 2. Am
մեծ Սա - յաթ - Նո - վի, հյուս-ված եմ -վի:

# ԱԿՈՐԴԵՈՆ

Ակորդեոնն եմ օդաhունչ,
Լեզվակավոր, բազմատոն,
Ինձ և բայան են կոչում,
Եվ անվանում են hարմոն:
Մեծ, տրոփող սրտի պես
Երգ ու տաղ եմ տալիս ձեզ:





Աշխույժ
C G7 C
Ա - կոր - դե - ոնն եմ օ - դա - հունչ, լեզ - վա - կա
Dm A7 Dm Dm G7
-վոր, բազ - մա - տոն, ինձ և՛ բա - յան են կո -
C A7 D D7 G
- չում, և ան - վա - նում են հար - մոն:
CODA
F E E♭ G7
Մեծ, տը - րո - փող սըր - տի պես երգ ու
C G7 C
տաղ եմ տա - լիս ձեզ:

# ՍՐԻՆԳ



Փայտափող եմ մի հասարակ,
Բաղձալի հյուր եմ ամեն տեղ,
Ինձ էլ բլուլ կոչեց սիրով
Կոմիտասը մեր հանճարեղ:
Շուրթերով իմ երգը հայոց
Հնչեցնելով բեմերում մեծ,
Իր դյութական անուշ ձայնով
Հազարների սիրտը գերեց:





# ԿԻԹԱՌ

Ես կիթառ եմ, ես կիթառ եմ,
Ծնված օրից սիրահար եմ,
Ջահելների սրտերում՝ երգ,
Համերգներում ամենուրեք...



# ՔԱՆՈՆ

Ես կսմիթա-լարային գործիք եմ,
Իմացեք,
Առանց մատնոց ինձ չեք կարող
Նվագել, նվագե՜լ...
Հնչյուններս շա՜տ շատերին են
Հուզո՜ւմ, հուզո՜ւմ...
Սիրող սրտի, հոգու հետ եմ ես
Խոսում, խոսում:




Աշխույժ, ժիր
D Gm6 D D
Ես կըս - մի - թա - լա - րա - յին գոր - ծիք եմ, ի - մա - ցե՞ք.
D C♮ B7 B7
ա - ռանց մատ - նոց ինձ չեք կա - րող նը - վա - գե՞լ, նը - վա - գե՞լ...
Em B7 Em B7 Em
Հըն - չյուն - նե - րըս շատ շա - տե - րին են հու - զո՞ւմ, հու - զո՞ւմ...
D D A7 D A7 D
սի - րող սըր - տի, հո - գու հետ եմ ես խո - սում, խո - սում:

# ՖԼԵՅՏԱ

Ֆլեյտա՛, ֆլեյտա՛. փայտափող եմ ես,
Ֆլեյտա՛, ֆլեյտա՛. երգի տող եմ ես,
Ես կարող եմ ազատ շնչել,
Նաև դառնալ սուր ու հնչեղ:
Թավշահնչյուն ձայն ունեմ ես,
Արտը մտած հովը  ինչպես...




Աշխույժ
D Em A7 D
Ֆլեյ - տա՜, ֆլեյ - տա՜. փայ - տա - փող եմ ես,
Bm Em A7 D
Ֆլեյ - տա՜, ֆլեյ - տա՜. եր - գի տող եմ ես,
D B7 Em A7 D
Ես կա - րող եմ ա - զատ շըն - չել, նա - և դառ - նալ սուր ու հըն - չեղ:
Am B7 Em Em A7 D
Թավ - շա - հըն - չյուն ձայն ու - նեմ ես, ար - տը մը - տած հո - վը ինչ - պես...

# ՏԱՎԻՂ

Տավի՛ղ, տավի՛ղ, դու բազմալար,
Հնչյունների հրաշք աշխարհ,
Հին դարերից հասած դու մեզ
Քաղցր ձայնով անուշ ու հեզ,
Անուշ ու հեզ...
Տավի՛ղ, տավի՛ղ հոգեզմայլ,
Քեզ ինչ ձեռքեր կյանք տվեցին,
Որ հմայում ես ու գերում
Սիրով այդպես փոքր ու մեծին:




Աշխույժ
Em F♯ Am B7
Տա - վի՜ղ, տա - վիղ, դու բազ - մա - լար,
Em Am Fm9 B7
իրն - չյուն - նե - րի իր - բաշք աշ - խարհ,
F♯m9 B7 Em
հին դա - րե - րից հա - սած դու մեզ քաղ - ցրր ձայ -
1.
Am F♯6 B7
-նով ա - նուշ ու հեզ, ա - նուշ ու հեզ...
2.
Am C♮ B7 Em
-նով ա - նուշ ու հեզ, ա - նուշ ու հեզ...

# ՊԱՐԿԱՊԶՈՒԿ

Պարկապզուկ, պարկապզուկ,
Այս ի՞նչ հրաշք գործիք ես դու,
Այծի մորթուց ծնունդ առած,
Նվագարան մի նոր դառած,
Լեզվակավո՞ր, փողակներո՞վ,
Տարօրինակ գուցե մի քիչ,
Ուռած փորով, ձայնով քո զիլ
Մեղեդիներ ես դայլայլում:




Աշխույժ
E Am E
Պար - կա - պը - զուկ, պար - կա - պը - կու, այս
B7 E G♯ C♯m G♯
ի՞նչ հը - րաշք գոր - ծիք ես դու, այ - ծի մոր - թուց ծը - նունդ ա -
C♯m F♯ F♯7 B B7
- ռած, նվա - գա - րան մի նոր դա - ռած, լեզ - վա - կա -
E B E G♯ C♯m
- վո՞ր, փո - ղակ - նե - րո՞վ, տար - օ - րի - նակ գու - ցե մի
F♯ B7 E
քիչ, ու - ռած փո - րով, ձայ - նով քո
C♯m F♯m B7 E
զիլ մե - ղե - դի - ներ ես դայ - լայ - լում:

# ՇՐԹՀԱՐՄՈՆ

Ես փոքրիկ եմ՝ թիզ ու կես
Բայց անուշ ձայն ունեմ ես,
Համբույրներով ձեր շրթի
Երգ եմ հանում իմ սրտից...




Աշխույժ
A Fm
Ես փոք - րիկ եմ՝ թիզ ու կես,
D B E
բայց ա - նուշ ձայն ու - նեմ ես,
C♯ C♯ Fm
համ - բույր - նե - րով ձեր շըր - թի
Bm E7 A
երգ եմ հա - նում իմ սըր - տից...

# ՍԱՔՍՈՖՈՆ

Մետաղափող գործիք եմ ես,
Սաքսն է ինձ կյանք պարգևել,
Ջազում, գիտեմ, գերում եմ ձեզ.
Ձայնս թավ է ու հյութեղ:
Ասեմ նաև՝ յոթ եղբայրներ
Նույն անունով ենք կոչվում.
Սակայն ձայներ ունենք տարբեր,
Շա՜տ տարբեր ենք մենք հնչում:




Աշխույժ
D E7
Մե - տա - ղա-փող գոր - ծիք եմ ես,
G A7 D G F♯ F♯7 Bm
Սաքսն է ինձ կյանք պար- գե - վել, ջա - զում, գի - տեմ, գե - րում եմ ձեզ.
Em A7 1. D 2. D
ձայ - նըս թավ է ու հյու - թեղ, ջա- -թեղ: Ա - սեմ նա-
G A7 D C♯7
-և յոթ եղ - բայր - ներ նույն ա - նու - նով ենք կոչ -
F♯ G A7 D
-վում. սա - կայն ձայ - ներ ու - նենք տար - բեր, շատ տար -
D A7 D
-բեր ենք մենք հըն - չում:

# ԶՈՒՌՆԱ

Ես զուռնան եմ՝ ձայնս սուր է, ճչացող,
Ուրախ, աշխույժ հանդեսներին ձեզ կանչող.
Փայտափող եմ՝ ծիրանենի, տանձենի,
Բայց դե առանց կոկորդ ո՞վ ձայն կհանի...

Իմ կոկորդը՝ ինչով երգում եմ, շնչում,
Եղեգնից է. նրան պիպիչ են կոչում:
Ես զուռնան եմ՝ ձայնս սուր է, ճչացող,
Ուրախ, աշխույժ հանդեսներին ձեզ կանչող:




Արագ, աշխույժ
D E
Ես զուռ - նան եմ՝ ձայ - նըս սուր է.
A7 D D
Ճը - - չա - ցող, ու - րախ, աշ - խույժ
E A7 D
հան - դես - նե - րին ձեզ կան - չող.
G Em
փայ - տա - փող եմ՝ ծի - րա - նե - նի.
A7 D D
տան - ձե - նի, բայց դե ա - ռանց
Em A7 D
կո - կորդ ո՞վ ձայն կը - հա - նի...

# ԹԱՌ

Ես ընկերն եմ աշուղների՝
Պարզ ու հասարակ,
Նրանց հետ եմ միշտ շրջում
Գյուղեր ու քաղաք...
Ուրախացնում մարդկանց տխուր՝
Նվագ ու երգով,
Ես սպասված հյուր եմ բոլոր
Հարկերի ներքո:




Հանգիստ
D D
ես ըն - կերն եմ ա - շուղ - նե - րի՝
Gm A7 D
պարզ ու հա - սա - րակ,
B7 Em
նը - րանց հետ եմ միշտ շըր - ջում
G A7 D
գյու - ղեր ու քա - ղաք...
D7 B7 Em
Ու - րա - խաց - նում մարդ - կանց սը - խուր՝
A7 D
նը - վագ ու եր - գով,
Em A7 D Bm
ես սպաս - ված հյուր եմ բո - լոր
G A7 D
հար - կե - րի ներ - քո:

# ԴՀՈԼ

Ծառի բուն եմ ասես հատած,
Գլանաձև թմբուկ եմ ես,
Այծի կաշվով դեմքս պատած,
Որին պիտի փայտով թակես
Կամ մատներով նուրբ, սրտագին,
Եվ այդ դեպքում, հավատացե՛ք,
Ես նոր գույներ, հմայք կտամ
Դուդուկ-զուռնի ջերմ նվագին...







Աշխույժ
Ծա - ռի բուն եմ ա - սես հա - տած, գը - լա - նա -
-ձև թըմ - բուկ եմ ես, այ -
-ծի կաշ - վով դեմ - քըս պա - տած, ո - րին պի -
-տի փայ - տով թա - կես, թա - կես
կամ մատ-նե-րով նուրբ, սըր - տա-գին, և այդ դեպ-քում, հա - վա - տա-ցե՞ք.
ես նոր գույ-ներ, հը - մայք կը - տամ դու -դուկ - զուռ-նի ջերմ նը - վա-գին.
դու - դուկ - զուռ - նի ջերմ նը - վա -գին...

# ԹԱՎՋՈՒԹԱԿ

Եղբայրն եմ ես ձեր ջութակի,
Անդամը նույն ընտանիքի,
Թեկուզ հատուկ ձայնով իմ թավ
Ունեմ ուրիշ անուն, համբավ:
Բայց մի բանով հաստատ նույնն ենք,
Երկուսս էլ չորս լար ունենք.
Լինենք բաս, թե տենոր,
Գործիքներ ենք, գործիքներ ենք
Մենք աղեղնավոր:




Հանգիստ
Dm Gm A7 Dm Dm Gm
եղ-բայրն եմ ես ձեր ցու-թա կի. ան-դա-մը նույն ըն-
C7 F Gm A7
-տա-նի-քի. թե-կուզ հա-տուկ ձայ-նով իմ բավ ու-նեմ ու-
Dm B G7 A7
-րիշ ա-նուն, համ-բավ: Բայց մի բա-նով հաս-տատ
1. Dm 2. Dm
նույնն ենք. թե-կուզ հա- նույնն ենք.
D Gm D A7 D
եր-կուսս էլ չորս լար ու-նենք. լի-նենք բաս, թե տե-նոր,
G D Em A7 1. D 2. D
գոր-ծիք-ներ ենք. գոր-ծիք-ներ ենք մենք ա-ղեղ-նա-վոր.

## ԵՐԳԵՀՈՆ

Երգեհո՜ն եմ, երգեհո՜ն եմ,
Բազմափող ու բազմաձայն,
Հնչյուններս ձեզ տանում են
Մի անափ, անհուն աշխարհ:




Հանդարտ
Dm D3/4 Dm E7
եր - գե - հո՞ն եմ, եր - գե - հո՞ն եմ, բազ մա - փող ու բազ մա-
A7 Gm7 A7 Dm
- ձայն, հըն - չյուն - նե - րըս ձեզ տա - նում են մի ան -
B♭ Gm A7 Gm7 A7
- ափ, ան - հուն աշ - խարհ, հըն - չյուն - նե - րըս ձեզ տա -
Dm B♭7 A7 Dm
նում են մի ան - ափ, ան - հուն աշ - խարհ:

# ԾՆԾՂԱ

Ձուլված պղինձ ու անագից
Ափսեներ ենք մենք երկու,
Եղբոր նման իրար գալիս,
Ծափ ենք տալիս զրնգուն:
Մեր զնգոցը միշտ լսվում է
Շքերթներում, ամենուր,
Իմացե՛ք դուք, որ առանց մեզ
Ոչ մի տոն չի կատարվում:




Հանդիսավոր
D Gm D F♯⁶ Bm
Ձուլ -ված պը-ղինձ ու ա - նա-գից ափ - սե - ներ ենք մենք եր -
E Em B⁷ Em
-կու, եղ - բոր նը - ման ի - րար գա - լիս,
A⁷ D D G A⁷ D
ծափ ենք տա - լիս զրն - գուն: Մեր զըն-գո - ցը միշտ լըս-վում է
A⁷ D G D⁶ A⁵/⁶ D
շը -քերթ-նե - րում և ա - մե - նուր, ի - մա-ցե՛ք դուք, որ ա -ռանց մեզ
1. Em A⁷ D
ոչ մի տոն չի կա -տար-վում,
2. Em A⁷ D
ոչ մի տոն չի կա -տար-վում:

# ԵՂՋԵՐԱՓՈՂ

Սովորական եղջյուրից
եզան, ցուլի ու կովի,
Նվագարան դու դարձար
Շուրթին մի օր մի հովվի:

Զորքին ոգի ներշնչող
Գործիք դարձար դու մի նոր,
Թշնամու դեմ մարտնչող
Հայրենասեր մի զինվոր:

Եվ քեզ այնքան սիրեցին,
Որ թոռ ու ծոռ ունեցար,
Դարձար բազում փողային
Գործիքների նախահայր:





Հանդարտ
D Bm9
Սո - վո - րա8 - կան եղ - ջյու - րից ե - զան, ցու -
-գի ներ - շըն - չող գոր - ծիք դար-
Em F♯7 1. Bm F♯m C♯7
-լի ու կո - վի, ըն - վա - գա - րան դու դար -
-ձար դու մի նոր, թըշ - նա - մու դեմ մար - տըն -
F♯m Bm F♯m6/4 C♯7 1. F♯m
-ձար շուր-թին մի օր մի հով - վի: Ջոր-քին ո -
-չող հայ - րե - նա - սեր մի զին -
2. F♯m E7 A E7 A 2. C♯7
-վոր: Եվ քեզ այն - քան սի - րե - ցին, որ թող ու
F♯m 3. B Bm E7
ծող ու - նե - ցար, դար - ձար բա -գում փո - ղա -
A E7 1. A 2. A
-յին գոր-ծիք-նե - րի նա - խա - հայր, դար - -հայր:

# ԴԱՓ

Ես էլ դհոլ եմ կիսված,
Ունեմ կաշվե մի երես,
Ներսից փոքրիկ օղերով,
Դրամներով զարդարված:
Դափ խփողի ափի հետ`
Զնգզնգում եմ ծափի հետ,
Ձեռքերի մեջ թռչկոտում,
Ասես պարում եմ օդում...



## Նազանքով


E B7 E G♯7
Ես էլ դը - հոլ եմ կիս - ված, ու - նեմ կաշ - վե մի ե -
C♯ A E B7 E B7 E
-րես, ներ - սից փոք - րիկ օ - ղե - րով, դը - րամ - նե - րով զար - դար - ված, ներ
A E B7 E B7 E
-սից փոք - րիկ օ - ղե - րով, դը - րամ - նե - րով զար - դար - ված:
C♯7 F♯m B7 E
Դափ խըր - փո - ղի ա - փի հետ՝ զըրնգ - զըրն - գում եմ ծա - փի հետ,
C♯7 F♯m B7 E B7 E
ձեռ - քե - րի մեջ թըռչ - կո - տում, ա - սես պա - րում եմ օ - դում...

# ԿԼԱՌՆԵՏ

Սրինգից եմ ես ստեղծվել,
Փողս փայտե, եռամաս,
Ինձ էլ կլառնետ են կոչել,
Ես գործիք եմ մի շատ պարզ:
Կտուցաձև իմ ծվանին
Մի պիպիչ էլ ես ունեմ,
Որ իմ հոգուց՝ ձեզ արժանի
Մեղեդիներ նվիրեմ...




Դանդաղ
D D
Սը - րին - գից եմ ես ստեղծ - վել,
Bm G♯7 F♯m
փո - ղըս փայ - տե, ե - ռա - մաս,
Bm G♯7 G♯5/6 F♯m
ինձ էլ կլառ - նետ են կո - չել,
D E7 A
ես գոր - ծիք եմ մի շատ պարզ:
C♯m F♯m G♯7 F♯m
Կը - տու - ցա - ձև իմ ծը - վա - նին մի պի - պիչ էլ ես ու - նեմ,
B7 E B7 E
որ իմ հո - գուց ձեզ ար - ժա - նի մե - ղե - դի - ներ նը - վի - րեմ...

# ՋՈՒԹԱԿ

Չորս լարով եմ խոսում, հնչում,
Ձայնս մի քիչ թախծահնչյուն,
Մեղեդիներն իմ սրտահույզ
Ներշնչում են հավատ ու հույս,
Մրմունջների պես աղոթքի
Լուսավորում եմ ձեր հոգին:




Աշխույժ
Dm Gm A7 Dm
Չորս լա - րով եմ խո - սում, իրն - չում,
Gm A7 Dm
ձայ - նըս մի քիչ թախ - ծա - հըն - չյուն, մե - ղե - դի -
Gm A7 B♭ Gm A7
-ներն իմ սըր - տա - հույզ ներ - շըն - չում են հա - վատ ու
1. Dm 2. Dm
հույս, մե - ղե - դի - հույս, մըր - մունջ - նե -
Gm C7 F
-րի պես ա - ղոթ - քի լու - սա - վո -
G B♭ A7 1. Dm 2. Dm
-րում եմ ձեր հո - գին: մըր-մունջ - նե - -գին:

# ԴՈՒԴՈՒԿ

Ես դուդուկն եմ ծիրանափող՝
Հին դարերից ծնունդ առած,
Բարություն ու սեր գովերգող,
Աչքս բարու ճամփին հառած։
Միշտ ընկերն եմ եղել հայի,
Շատ եմ տխրել, ուրախացել,
Այնքա՜ն փարվել նրա շրթին,
Որ հայացել, հայ եմ դարձել։




Աշխույժ
C Fm C
Ես դու - դուկն եմ ծի - րա - նա - փող
Միշտ ըն - կերն եմ ե - ղել հա - յի.
Am A7 Dm
հին դա - րե - րից ծը - նունդ ա - ռած, քա - րու -
շատ եմ տըխ - րել, ու - րա - խա - ցել, այն -
Fm G7 Am
-թյուն ու սեր գո - վեր - գող,
-քա՜ն փար - վել նը - րա շըր - թին,
F G7 1. C 2. C
աչ - քըս քա - րու ճամ - փին հա - ռած, քա -րու - -ռած:
որ հա - յա - ցել, հայ եմ դար - ձել, այն - -ձել:

# ՎԵՐՋԵՐԳ

Գործիքներ կան շատ ու բազում,
Որ ձեր ձեռքերն են երազում,
Ձեր մատների շփումը թանկ,
Ձեր շուրթերի հպումը տաք,
Որ կյանք առնեն, առնեն լեզու,
Խոսեն մեր լուռ սրտերի հետ,
Կարոտ դառնան ու երազանք:
Մեզ հավատ ու հույս ներշնչեն,
Նոր արարման երթի կանչեն,
Ծնված սիրուց ժողովրդի՝
Բաղձանքը մեր,
Դայլայլներով իրենց շքեղ
Հաղորդեն միշտ նոր սերնդին...
Եվ նրա հետ միշտ նորանան,
Եվ նորերի հոգիներից
Նոր գույներ ու մեղեդիներ
Աշխարհի բերեն, հարստանա՜ն,
Նրանց պես թարմ, ջահել մնան,
Եվ նրանց հետ հավերժանա՜ն...

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախերգ ........ 3
Դաշնամուր ........ 4
Քամանչա ........ 6
Ակորդեոն ........ 8
Սրինգ ........ 10
Կիթառ ........ 11
Քանոն ........ 12
Ֆլեյտա ........ 14
Տավիղ ........ 16
Պարկապզուկ ........ 18
Շրթհարմոն ........ 20
Սաքսոֆոն ........ 22
Զուռնա ........ 24
Թառ ........ 26
Դհոլ ........ 28
Թավջութակ ........ 30
Երգեհոն ........ 32
Ծնծղա ........ 34
Եղջերափող ........ 36
Դափ ........ 38
Կլառնետ ........ 40
Ջութակ ........ 42
Դուդուկ ........ 44
Վերջերգ ........ 46

ԼԻՊԱՐԻՏ ՍԱՐԳՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ ԳԱԼՑԱՆ

# ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ



*Հրատարակչության խմբագիր՝ Գալյա Հովհաննիսյան*

**ԷԴԻԹ ՊՐԻՆՏ**
Երևան, Թումանյան 12
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am